

Օ Ր Ա Կ Ա Ր Գ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

04.02.2020թ.

հ. Ստեփանավան

- ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձեկուցող Ռ.  
ՔՈԶԱՐՅԱՆ

- ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ԶՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ  
ՂԱՐԻԲՅԱՆ

Ձեկուցող Թ.

- 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆԻՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձեկուցող Թ. ՂԱՐԻԲՅԱՆ

- ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձեկուցող Լ.  
ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

- ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 29.11.2019Թ. ԹԻՎ 88-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 6-ՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձեկուցող Ռ. ՔՈԶԱՐՅԱՆ

- ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Գ.ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 5/1 ՀԱՍՅԵԻ 06-007-0084-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ 0.001151 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՀ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 60-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿԻՑ ՀԱՆԵԼՈՒ, ԳՈՐԾԱՐՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձեկուցող Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

- ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԱՌԱՆՁԻՆ ՀՈՂԱԿՏՈՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձեկուցող Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ստեփանավան համայնքի ավագանու

Որոշում

**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետը՝ Ստեփանավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հաստատել համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը համաձայն հավելվածի:

Կազմեց՝

Ռ.Քոչարյան

Նախագիծ

**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով համայնքի ավագանին՝ **որոշում է**

1. Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը Ստեփանավան համայնքի 2019թ. բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման մասին՝ համաձայն 1-5 հավելվածների:

Կազմեց՝

Թ. Ղարիբյան

Նախագիծ

Ստեփանավան համայնքի ավագանու

Որոշում

## **ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օերնքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասը՝ համայնքի ավագանին

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

Հաստատել Ստեփանավան համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 88-Ն որոշմամբ հաստատված Ստեփանավան համայնքի 2020 թվականի բյուջեում կատարված փոփոխությունները համաձայն հավելվածի:

Կազմեց՝

Թ. Ղարիբյան

**ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ****ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ**

- |  |                                    |
|--|------------------------------------|
| 1. <u>Գյուլնարա Քալաշյան</u><br>( Անուն, ազգանուն) | 10000 հազար դրամ, սոց. օգնություն, |
| 2. <u>Սեդա Հակոբյան</u><br>(Անուն, ազգանուն)       | 10000 հազար դրամ, սոց. օգնություն, |
| 3. <u>Մարգո Թումանյան</u><br>(Անուն, ազգանուն)     | 10000 հազար դրամ, սոց. օգնություն, |
| 4. <u>Արուսյակ Երիցփոխովա</u><br>(Անուն, ազգանուն) | 10000 հազար դրամ, սոց. օգնություն, |
| 5. <u>Սուսաննա Մովսիսյան</u><br>(Անուն, ազգանուն)  | 10000 հազար դրամ, սոց. օգնություն, |
| 6. <u>Հռիփսիմե Ղազարյան</u><br>(Անուն, ազգանուն)   | 10000 հազար դրամ, սոց. օգնություն, |
| 7. <u>Սասուն Սահինյան</u><br>(Անուն, ազգանուն)     | 10000 հազար դրամ, սոց. օգնություն, |
| 8. <u>Կարինե Բաբուռյան</u><br>(Անուն, ազգանուն)    | 10000 հազար դրամ, սոց. օգնություն, |
| 9. <u>Վարդանուշ Լազարբիձե</u><br>(Անուն, ազգանուն) | 10000 հազար դրամ, սոց. օգնություն, |
| 10. <u>Գոհար Մելիքջանյան</u><br>(Անուն, ազգանուն)  | 10000 հազար դրամ, սոց. օգնություն, |
| 11. <u>Ալվարդ Մուրադյան</u><br>(Անուն, ազգանուն)   | 10000 հազար դրամ, սոց. օգնություն, |
| 12. <u>Լենա Պապիկյան</u><br>(Անուն, ազգանուն)      | 10000 հազար դրամ, սոց. օգնություն, |
| 13. <u>Անուշ Պետրոսյան</u><br>(Անուն, ազգանուն)    | 10000 հազար դրամ, սոց. օգնություն, |
| 14. <u>Անահիտ Դոխոսյան</u><br>(Անուն, ազգանուն)    | 10000 հազար դրամ, սոց. օգնություն, |
| 15. <u>Գրետա Շիրաչյան</u><br>(Անուն, ազգանուն)     | 10000 հազար դրամ, սոց. օգնություն, |

Կազմեց՝

Լ. Քալանթարյան

Ստեփանավան համայնքի ավագանու

Որոշում

**ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի, համայնքի ավագանու **2019 թվականի** հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ **49-Ա** որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զրկված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը Ստեփանավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո **10-օրյա** ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կազմեց՝

Լ. Քալանթարյան

Նախագիծ

Ստեփանավան համայնքի ավագանու

Որոշում

**ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 29.11.2019թ. ԹԻՎ 88-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 6-ՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ստեփանավան համայնքի ավագանու 29.11.2019թ. թիվ 88-Ա որոշման թիվ 6 հավելվածով հաստատվել է «ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը,

Ներկայումս աշխատանքների ծավալի հետ կապված անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ կատարել Ստեփանավան համայնքի ավագանու 29.11.2019թ. թիվ 88-Ա որոշման թիվ 6 հավելվածում:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, Ստեփանավան համայնքի ավագանին

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

1. Ստեփանավան համայնքի ավագանու 29.11.2019թ. թիվ 88-Ա որոշման թիվ 6 հավելվածում կատարել փոփոխություն, այն է «ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անձնակազմի աշխատակիցների թվաքանակը սահմանել՝ 49, հաստիքների թվաքանակը՝ 49:
2. Փոփոխել Ստեփանավան համայնքի ավագանու 29.11.2019թ. թիվ 88-Ա որոշման թիվ 6 հավելվածում հաստիքի անվանումը բաժնի 17-րդ և 18-րդ կետերը՝

Ավագ հսկիչ	1	89611	130000
Հսկիչ	2	89611	179222
3. Հաստատել 2019թ. «ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն թիվ 1 հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կազմեց՝

Ռ. Քոչարյան

«ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»  
 համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային  
 դրույքաչափերը

Աշխատողների թվաքանակը – 49				
«ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն				
Հաստիքի անվանումը	Հաստիք	Դրույքը	Դրույքաչափը	Ընդամենը
Տնօրեն	1	1	280000	280000
Տնօրենի տեղակալ	1	1	230000	230000
Ինժեներ	1	1	200000	200000
Հաշվապահ	1	1	200000	200000
Մեխանիկ	1	1	180000	180000
Օպերատոր	1	1	150000	150000
Հաշվետար	1	1	89611	89611
Փականագործ	1	1	150000	150000
Վարորդ	7	7	140000	980000
Ավտոգրեյդերի վարորդ	1	1	150000	150000
Էքսկավատորի վարորդ	1	1	150000	150000
Բրիգադիր	2	2	140000	280000
Բանվոր	8	8	120000	960000
Ավյուղ-հավաքարար	11	11	100000	1100000
Գանձող	3	3	89611	268833
Էլեկտրիկ	2	2	120000	240000
Ավագ հսկիչ	1	1	130000	13000
Հսկիչ	2	2	89611	179222
Պահակ	3	3	89611	268833
<b>Ընդամենը</b>	<b>49</b>			<b>6186499</b>

**ՀՀ ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Գ.ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 5/1  
ՀԱՍՑԵԻ 06-007-0084-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ 0.001151 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ  
ՀՈՂԱՄԱՍԸ ՀՀ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ 60-ՐԴ ՀՈՂՎԱԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ  
ՑԱՆԿԻՑ ՀԱՆԵԼՈՒ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ  
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Կամո Վիուլի Ղարաջյանի դիմումը՝ Գ.Նժդեհի փողոց թիվ 5/1 հասցեի 0.001151 հա կառուցապատման իրավունքով իրեն պատկանող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին, 04.12.2012թ. թիվ 04122012-06-0263 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, Ստեփանավան քաղաքային համայնքի գլխավոր հատակագիծը, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ և 66-րդ հոդվածի 3-րդ կետով Ստեփանավան համայնքի ավագանին

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

Հիմք ընդունելով Ստեփանավան քաղաքի գլխավոր հատակագիծը, Ստեփանավան համայնքի սեփականությունը հանդիսացող Գ.Նժդեհի փողոց 5/1 հասցեի, 06-007-0084-0011 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.001151 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը հանել ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկից և նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել հողամասը կառուցապատման իրավունքով օգտագործող Կամո Վիուլի Ղարաջյանին:

Համաձայն Ստեփանավան քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի և տարածքների գոտիավորման նախագծի, վերը նշված հողամասը հանել ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկից, հողամասի գործառնական նշանակությունը փոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության: Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում: Հողամասի ուղղակի վաճառքով օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Համայնքի ղեկավարին գործող օրենսդրության համաձայն հողամասը ուղղակի վաճառքով օտարել Կամո Վիուլի Ղարաջյանին և սահմանված կարգով նրա հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

4. Հողամասի օտարման գինը սահմանել՝ Ստեփանավան քաղաքի հողամասերի կադաստրային արժեքը՝ 1 քմ հողամասի համար 528.0 /հինգ հարյուր քսանութ/ ՀՀ դրամ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կազմեց՝

Հ. Աբրահամյան



**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԱՌԱՆՁԻՆ  
ՀՈՂԱԿՏՈՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հուլիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և Ստեփանավան համայնքի բնակավայրի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու վերաբերյալ միջգերատեսչական հանձնաժողովի 16.01.2020թ. N 1/փ- 4 դրական եզրակարգումը Ստեփանավան համայնքի ավագանին

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

1. Հայաստանի Հանրապետության Ստեփանավան համայնքի վարչական սահմանում գտնվող, քաղաքացի Աստղիկ Չոբանյանի սեփականությունը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության, արդյունաբերական օբեկտների գործառնական նշանակության 0.06575 հա հողամասը 06-077-0219-0035 ծածկագրից, փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակության:
2. Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14<sup>3</sup> հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կազմեց՝

Հ. Աբրահամյան